Ալեքսանդր Ծատուրյան

Ծատերից մեկը

Ես տեսա նորան - այն մատաղ կուսին
Հարսնական շորով տաճարում կանգնած.
Տանջանքի հետքեր գունատ երեսին,
Տխուր հայացքը գետին խոնարհած:

Անզոր, անբարբառ, որպես մի գառնիկ,
Սպանդանոց բերված բոնակալ ձեռքով.
Կույսը զսպում էր սրրտի փոթորիկ,
Կույսը լալիս էր սրտի արցունքով...

Եվ նորա կողքին ինքնագոհ, հրպարտ
Կանգնած էր փեսան Կրեսոսի փառքով.
Ջոհը - կենսավառ, որպես գարնան վարդ,
Դահիճն - ուժասպառ, խորշոմած դեմքով...

Եվ խուռ բազմություն, ծընող, ազգական,
Դպիր, քահանա խաչ ու մոմ ձեռին՝
Լուռ վրկա էին զոհաբերության
Այդ սրբագործված զազիր պատկերին...

Օ՛, խղճո՛ւկ հայ կին, անարգվա՛ծ էակ,
Հա՛մր ստրկություն ահա քո անուն.
Անգարո՛ւն քո կյանք, անլո՛ւյս քո վիճակ,

Արդյոք ե՞րբ պետք է բացվի քո լեզուն...